

Երեքշաբթի 5 Դեկտեմբեր 2023

Պատմութիւններ – Ապուշ պատմութիւններ

Ի՞նչ կը պատմես:

- Ես ոչ ինչ չեմ պատմեր:

Կիները միշտ նոր բաներ կը պատմեն:

Ծերերը յաճախ հին բաներ կը պատմեն:

Ես դ՛րն ի՞նչ կը պատմես:

Տղամարդիկ բան չեն պատմեր: Աս ալ իսնդիր է:

Պարոն Եփրատին կինը Սելանիկ կ'երթայ:

- Ինչի՞ համար հոն կ'երթայ: Գիտե՞ս:

Այո, գիտեմ: Իր քեֆին համար կ'երթայ: Այսպէս կ'ըսեն:

- Չէ, այսպէս չէ: Տիկին Սուլթանա լաւ կին մըն է: Վստահ եմ
որ այսպէս չէ: Հոն գործին համար կ'երթայ:

Լաւ, գործին համար իր մարդը եւ իր զաւակներ առանձին կը ձգէ:

- Այո: Նոյնը չէ: Գործին համար հոն կ'երթայ: Շատ գործ ունի:
Փանոթ Աստուծոյ:

Պարոն Եփրատ շատ առաջ է: Իր կինը ազատ կը ձգէ:

- Անշուշտ: Ազատ երկիր է: Ազատամիտ մարդ ալ է:

Մեր հայ կիներ ասի չեն ըներ: Այսպէս չ' ըլլար: Տղամարդը առանձին իր երեխաներուն հետ ի՞նչ կ' ընէ, ի՞նչ կ' եփէ, ի՞նչ կը մաքրէ:

- Ի՞նչ կը պատմես: Ապուշ բաներ կը պատմես: Հայ կիներն ալ կ' ընեն, յոյն կիներն ալ կ' ընեն: Շատ կը խոսիս: Քիչ կը մտածես:

Պզտիկ տունը պարտեզ ունի: Պարտեզին մէջ ծառեր, բոյսեր, ծաղիկներ եւ խոտ կան:

Տան մէջ պզտիկ ընտանիք մը կը բնակի: Հայրը հալէպահայ մարդ է: Իր անունը Կոստան է: Մայրը յունահայ շնորհքով կին է: Իր անունը Մարալ է: Երկու զաւակ ունին: Իրենց մանչը Յակոբն է, իսկ՝ իրենց աղջիկը Անին է:

Կենդանի ալ ունին: Շուն մը եւ կատու մըն ալ ունին: Շան անունը Պելլա է: Կատուին անունը Ըխլամուր:

Տունը պզտիկ է: Ընտանիք փոքր է բայց ուրախ մարդիկ են:

Դուն՝ ո՞վ ես:

- Ես Հերվէն եմ:

Ինչի՞ մասին կը մտածես:

- Ես հայերէնի դասիս կը մտածեմ: Փարիզի դասերունս ալ կը մտածեմ: Չանոնք հիմա կը պատրաստեմ:

Ինչո՞ւ:

- Որովհետեւ յետոյ ժամանակ չկայ: Պոլիս կ' երթամ: Հոն աշխատիլ անկարելի է:

Պոլիս կ' երթաս:

- Այո, Պոլիս կ' երթամ: Արեւմտեան Սուրբ Ծնունդ կը ճամբորդեմ: Ամանոր Աթենք կը վերադառնամ: Քիչ մը տարօրինակ է բայց այսպէս տոմսակս աժան է:

Որո՞ւն հետ հոն կ' երթաս:

- Մինակս հոն կ' երթամ: Առանձին կ' ապրիմ: Առանձին ալ կը ճամբորդեմ: Ազատ եմ: Խնդիր չունիմ:

Ինչի՞ համար հոն կ' երթաս:

- Զէֆին համար հոն կ' երթամ: Բայց քիչ մըն ալ գործիս համար: Հոն շատ բարեկամներ ունիմ: Գիրքերուն պիտի նայիմ: Դասերուն համար հոն ըլլալը լաւ է: Միշտ հետաքրքրական բաներ, գիրքեր, գրութիւններ եւ թերթեր կը գտնեմ:

Լաւ: Բարի ճանապարհ եւ բարի վայելում:

Դուն ո՞վ ես:

Ինչի՞ մասին կը մտածես:

Որո՞ւն հետ կը խօսիս:

Ո՞ւր կը բնակիս:

Ո՞ւր կ' ուզես երթալ: Ե՞րբ: Ինչո՞ւ: Ինչի՞ համար: Որո՞ւն հետ: